

ՂԱՐԱՐԱՂԻ ԶՎԱՐՃԱԽՈՍ ՊԸԼ ՊՈՒՂԻՆ

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

Հայ ժողովրդական բանահյուսութիւնը հարուստ է երգիծական կերպարներով: Յուրաքանչյուր պատմաազգագրական շրջան ունի իր զուտ տեղային երգիծական կերպարը, ավելին՝ յուրաքանչյուր գյուղ ունի իր սիրելի զվարճախոս-երգիծարանը: Բարի, միամիտ, միշտ հնարամիտ, սրախոս, երբեմն հիմար, երբեմն խելոք, այդ կերպարները ստեղծվում են տվյալ շրջանի ազգագրական պատկերացումներին համապատասխան: Ժողովրդական ավանդույթը կերպարներին երբեմն օժտում է իրական-պատմական հատկանիշներով: Ինչպես, օրինակ, Պողոզ-Մուկուշը՝ Լենինականում, Կինոս քեռին՝ Ղափանում, Հոբոսը՝ Լոռիում: Երբեմն էլ դրանք հավաքական կերպարներ են. ներկայացնում են որոշակի շրջան, որի բնակիչները հայտնի են իրենց միամտությամբ ու պարզամտությամբ: Այդպիսիք են կաճետա ծոերը՝ Շատախից, հաթերքցիները՝ Արցախից, կուրթանցիները՝ Գուգարքից:

Թվարկված երգիծական կերպարների մեջ յուրահատուկ տեղ է գրավում ՊԸԼ Պուղին, որի շուրջը ստեղծված բանահյուսության հայրենիքը՝ Արցախն է. հատկապես պատմական Վարանդայի մելիքութիւնը: Բանավոր կենցաղավարմամբ, սակայն, այդ բանահյուսութիւնը տարածվել է հարևան, սահմանակից շրջաններում, հատկապես Զանգեզուրում և մեր օրերում հասել մինչև Իջևան ու Արարատյան դաշտավայր:

ՊԸԼ Պուղու զվարճապատումները հայտնի են անցյալ դարի երկրորդ կեսից: 1878 թ. Գ. Շերմազանյանը լույս է ընծայել ազգային անեկդոտների մի սովոր ժողովածու, ուր տեղադրված են ՊԸԼ Պուղուն վերագրվող զգալի քանակությամբ ստեղծագործութիւններ: 1883 թ. Մ. Բարխուդարյանցը Բիֆլիսում հրատարակում է «ՊԸԼ-Պուղի» դիրքը, որը պարունակում է թվով 189 զվարճապատում: Գրքի փոքրիկ առաջաբանում կենսագրական տեղեկութիւններ են հաղորդվում զվարճախոսի կյանքի վերաբերյալ: Երկու հնդկ-նականներ էլ նյութը ներկայացրել են անդեմ (ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ հանգումանքներում է դրի առնված այն, հայտնի չէ): Գ. Շերմազանյանը՝ խոսակցական-գրականով, Մ. Բարխուդարյանցը՝ անհաջող տառադարձված բարբառով: Սակայն այսօր այդ ժողովածուները պատկերացում են տալիս ՊԸԼ Պուղու շուրջը ստեղծված սյուժեների մասին և այդ առումով էլ արժեքավոր են. հատկապես եթե հաշվի առնենք, որ հրատարակիչները նյութը ժողովելիս շփվել են այնպիսի մարդկանց հետ, որոնք, հավանաբար, տեսել ու ունենդրել են ՊԸԼ Պուղուն:

ՊԸԼ Պուղուն իբրև բանահյուսության կերպարի շուրջը հետաքրքրութիւնն աշխուժանում է մեր դարի 50-ական թվականներին: Արցախի բանահյուսության հավաքմանը նախանձախնդիր գրեթե բոլոր բանահավաքների ֆոնդերում պահվում են զվարճախոսին վերագրվող ստեղծագործութիւնների նմուշ-

ներ, որոնց մեջ գդալի թիվ են կազմում նոր սյուժեները: Ջվարճապատում-ները բավականին ամբողջական մի հավաքածու պահվում է աբձակադիր Ս. Խանդաղյանի ֆոնդում, որը գրի է առնված 1946—1947 թթ. Գորիսի շրջանում¹, նոր դրամումների մի փոքր մասը հրատարակվել է: Բանահավաք Ս. Խարախյանը 1956 թ. Երևանում լույս է ընծայում իր հավաքած նյութերը՝ դրական և ոճական որոշ մշակմամբ: «Ղարաբաղի զվարճախոս Պրլ Պուղին» խորագիրը կրող այդ ժողովածուն անգուղական վարպետություն է: Բնադրերի իմաստային սրամտությունը հավասար սրամտությամբ ձևավորել է բանահավաքի որդին՝ ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռ. Խարախյանը: Պրլ Պուղու զվարճապատումների որոշ նմուշներ բանահավաք Մ. Գրիգորյան-Սյանցիկյանի հավաքածուից տեղ են գտել նրա կազմած ժողովածուում²:

Պրլ Պուղին նաև դրական-դրամատիկական կերպար է: Ա. Աբելյանը, Հար. Թումանյանը, Ա. Բարսեղյանը գրել են «Պրլ-Պուղին» վերնագրով դրամատիկական և քերական, որոնք ևրկար տարիներ հաջողությամբ բեմադրվել են հայ բեմում: Այդ սյուժեների հերոսն իր ողջ սրամտությունն ու հնարամտությունն օգտագործում է հայրենիքը օտար նվաճողներից պաշտպանելու և ազատագրելու գործում:

Այսպիսով, Պրլ Պուղու շուրջը ստեղծված բանահյուսությունը (շուրջ 200 սյուժե-սյուսում) հավաքված մեկ հարյուրամյակի ընթացքում, կազմում է մի սլավոնական ժառանգություն: Նման երջանիկ բախտի չի արժանացել հալ ընդհատությունը որևէ այլ կերպար, բացառությամբ ժողովրդական վեպի հերոսների: Ըստ բանավոր աղբյուրների՝ Պրլ Պուղին ծնվել է 1730-ական թվականներին, Ունեցել է կին, դավաճներ: Աչքի ընկնելով սրամտությամբ, նա Շոշ գյուղից տարվել է Մելիք-Շահնազարյանների նստավայր Ավետարանոց գյուղը և իր ողջ ևրկարատե կյանքն անց է կացրել մելիքների ապարան-րում, որոնց հետ ունեցել է նաև խնամիրական կապ: Ըստ Մ. Բարսեղյանից՝ մի զվարճապատման³ Պուղու աղաններից մեկն ամուսնացել է Մելիքի դեղեցիկ, բայց ծուլ-անբան Հուրդատ անունով աղջկա հետ, որին Պուղին կարողացել է դաստիարակել և աշխատասեր դարձնել: Ըստ մեկ այլ զվարճապատման⁴ այդ աղջիկը ևղել է տղեղ, տանը մնացած: Պուղին մելիքների ապարանքում ծաղրածու չի ևղել այդ բառի սովորական, հայտնի իմաստով: Նա գրավել է մի դիրք, որը կարելի է կոչել զվարճախոս-խորհրդատու: Նա մա-

¹ ՀՍՍՀ ԳԱ հետգիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ՀԱԻՐԱ), Ս. Խարախյանի, Մ. Գրիգորյան-Սյանցիկյանի, Մ. Առաքելյանի, Ա. Ղադիյանի, Բ. Ղադիյանի, Ա. Մարգարյանի ֆոնդեր (համարները նշվելու են տեղում):

² Նույն տեղում, ԲԲ II, 6200—6400:

³ «Ղարաբաղի զվարճախոս Պրլ Պուղին», հավաքեց և մշակեց Ս. Խարախյան, Երևան, 1956:

⁴ «Լեոնային Ղարաբաղի բանահյուսությունը», դրամներ, բնագրի սխարաստումը և ծանոթագրությունները Մ. Գրիգորյան-Սյանցիկյանի, Երևան, 1971:

⁵ Հայտնի զվարճախոսը ծանոթ է նաև ռուս հասարակությանը Սակայն, ցավոք, ռուսերեն թարգմանությունները կատարված են մշակումներից, նյութի ընտրությունը անհաշու է և զվարճախոսը չի փոխում իր հնարամտությամբ ու ողջ սրամտությամբ («Поучительные и познавательные истории армянского народа», составил Г. О. Каранетян, М., 1975):

⁶ «Պրլ-Պուղին», գրեց Մ. Վ. Բարսեղյանը, Թիֆլիս, 1883, էջ Ե, ՀԱԻՐԱ, Ս. Խանդաղյանի ֆոնդ, ԲԲ II, 6299—6303:

⁷ Ս. Բարսեղյանը, նշվ. աշխ., էջ 163:

⁸ ՀԱԻՐԱ, Ս. Խանդաղյանի ֆոնդ, ԲԲ II, 6301:

հասցել է շուրջ 1810 թ. Մ. Բարխուդարյանցի հրատարակած ժողովածուի վերջին ստեղծագործության վկայությամբ, Պուլին իր կտակի համաձայն թաղվել է Շոշ և Արկաթալու գյուղերի սահմանագծում գտնվող քարայրում, որը հետագայում կոչվել է Պուլուն Կարան (ըստ Ս. Խանզազյանի՝ Պուլուն Քըրատակ)։

Պուլին հայտնի է մականվամբ՝ Պըլ (այսինքն՝ գիժ), առանց որի նա բանահյուսական կյանք չունի։ Պուլուն մականունն իր նմանակներն ունի ինչպես հայ, այնպես էլ այլ ժողովուրդների բանահյուսության մեջ։ Ընդհանրապես ծուռ, գիժ մականվամբ ժողովուրդը մկրտում է այն մարդկանց, որոնց արարքները դուրս են գալիս սովորական, հասարակության կողմից սրբագործված չափանիշների, ըմբռնումների շրջանակներից։ Ծուռ են մեր ազգային վեպի հերոսները, ծուռ են կաճեացիները։ Հերոսի նկատմամբ ժողովրդի արտահայտած վերաբերմունքի համար կարևոր են քաջությունը, ըմբռնությունը, համարձակությունը, միամտությունը, ազնվությունը։ Այս հատկանիշներից Պուլուն յուրահատուկ են առավելապես համարձակությունն ու ըմբռնությունը, սրանց հետ մեկտեղ նաև՝ հնարամտությունը, սրամտությունը, արդարամտությունը, անկեղծությունը և ազնվությունը։ Օտար մարդիկ, երբ ծանոթանում են Պուլուն հետ, զարմանքով հարցնում են. դու խելոք մարդ ես, քեզ ինչու՞ են Պըլ կոչում։ Պուլին պատասխանում է, թե խելոք գծերի մեջ այդպես է երևում⁹, կամ՝ ինձ Պըլ են ասում, որ ես իրենց չասեմ¹⁰։

Պըլ Պուլուն անվան շուրջը ստեղծված բանահյուսական ստեղծագործությունները հիմնականում մեկ ավարտուն դրվագից, մեկ երկխոսությունից բաղկացած անսպասելի, արտաքուստ արտառոց թվացող լուծումներով երգիծական մանրապատումներ են։ Այդ մանրապատումներում միշտ առկա են ձրկու կողմ՝ Պուլին և նրա այսպիս ասած հակառակորդը, որը հանդես է գալիս Մելիք, Մելիք-Շահնազար անվամբ, երբեմն Մելիքին փոխարինում են խանը, հոգևորականը կամ որևէ անհայտ անձնավորություն։ Իբրև կանոն, Պուլին բոլոր վիճակներից դուրս է գալիս հաղթանակած՝ լինի դա գործողությամբ, թե խոսքով։ Օրինակ, երբ նա նոր կարկատած արխալուղով ներկայանում է Մելիքին և վերջինս շնորհավորում է ասելով՝ խելոք տեղ-տեղ շնորհավոր լինի, Պուլին անմիջապես պատասխանում է. օրումեջ ապրես, Մելիք¹¹։ Կամ՝ Պուլուն նոր շմուշկները թաքցնելու և այդպիսով նրա գլխին մի խաղ խաղալու նպատակով, երբ առաջարկում են բոբիկ ծառը բարձրանալ, Պուլին շմուշկները կապում է իրար, գցում ուսը, ապա սկսում է բարձրանալ, ասելով թե՛՝ այնտեղից գուցե ուրիշ տեղ եմ գնում¹²։

Համեմատաբար փոքրաթիվ են մի քանի դրվագից բաղկացած ստեղծագործությունները, որոնցում, սակայն, առկա է տրամանաբանական ներքին կապ, և դրվագները բխում են մեկը մյուսից։ Այդպիսի օրինակ է Պըլ Պուլուն և Մելիք Շահնազարի գրագի պատմությունը։ Մելիքը չի հավատում, որ Պուլին ձմեռվա ցրտին մերկ մնացել է դրսում և հրաժարվում է կատարել գրագի

⁹ Նույն տեղում, FF II, 6319։

¹⁰ Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 19։

¹¹ Նույն տեղում, էջ 5, ՀԱԻՐԱ, Ս. Իսրայելյանի ֆոնդ, FF II, 9030։

¹² Մ. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 14, Մ. Գրիգորյան-Սպանդարյան, նշվ. աշխ., էջ 394։

սլաշմանքի նա դառնում է, որ Պուլին տաքացել է հեռվում՝ Քուռի ափին (տարբերակ՝ Մոսվա գլխին կամ Միլի հարթավայրում) երևացող կրակից: Ի պատասխան դրա Պուլին Մելիքին հյուր է կանչում իր տուն և սկսում ճաշի պատրաստություն տեսնել: Նա ջրով լի կաթսան կախում է բուխարիկի ամենավերին մասից, տակը՝ դետնին կոսն անում: Համբերությունը հատած, բաղցած Մելիքի այն դիտողությանը, թե կրակից այդքան հեռու ջուրը ինչպե՞ս տաք է, Պուլին պատասխանում է՝ հապա Քուռի ափին (տարբերակ՝ Միլի հարթավայրում կամ Մոսվ սարի գլխին) երևացող կրակից ես ինչպե՞ս տաք է տաքանալի: Դժվար չէ նկատել, որ վերոհիշյալ երկու դրվադները լրացնում են մեկմեկու, միևյուրեւ իրեն անկախ միավորները դրանք դուրս են այն ևրդիծական ընկալությունից, որ ունեն համատեղ Մ. Գրիգորյան-Սոփանդարյանի ժողովածուում այդ դրվադները ներկայացված են առանձին. սկզբում առաջինը, ապա երկրորդը՝ մատչելի, հասկանալի դարձնելու նպատակով:

Ձվարճապատումների վերջին տարիների դրառումներն ընդհանրապես ծանրարևոտված են ավելորդություններով, մի հանգամանք, որը ճաշող է դարձնում մանրապատումը, զրկում երդիծական սրությունից: Մ. Բարխուդարյանի ժողովածուում կա մի զվարճապատում այն մասին, թե ինչպե՞ս Պրլ Պուլին հանդիպելու ամեն ինչը, ճանապարհին, երբ նա հոգնում է, պոռկում է քնելու՝ առանձր վերջում են, փոխարենը շուր լցնում: Պատումը բաղկացած է մեկ փոքրագիր էջից: Այն առանց բնութագրիչ համեմատությունների, առանց ավելորդաբանությունների սոսկ գործողության նկարագրություն է¹⁴, Միևյուրեւ Մ. Գրիգորյան-Սոփանդարյանի պատումը ծավալով բավականին բնագրական է: Այստեղ բացի բուն գործողությունից, ներկայացված են բնության տեսարաններ, մրդերի տեսանքների նկարագրություններ, գործող անձանց մտորումներ, գործողության սկիզբը ևս ենթարկվել է փոփոխության¹⁵:

Վերջին տարիների դրառումներում դիտվում է նաև մի միտում. Պրլ Պուլին անվան շուրջն են համախմբվում ավելի ծավալուն սյուժեներ: Բացի այդ, Պուլին հրեման փոխարինում է անվանի և անանուն ևրդիծական հերոսներին, ինչպես կարճ, այնպես էլ բնագրական, բաղադրված ստեղծագործություններում: Այսպես, Բահուլին փոխարինելով մի սյուժեում, ուր պատմվում է Հարուն ու Ռաշիդ թագավորի պատերից անհեռատես հյուրին էջի միջոցով խորհուրդներ ուղարկելու մասին, Բահուլին փոխարինել է Պրլ Պուլին¹⁶:

Պրլ Պուլին իբրև ևրդիծական կերպար բացահայտվում է կյանքի տարբեր բնագրականների հետ ունեցած փոխհարաբերություններում: Առաջին հերթին նա ստեղծվում է Մելիք-Շահնաղարի հետ: Պրլ Պուլի և Մելիք-Շահնաղարի դուրի փոխհարաբերության սխեման համաշխարհային բանահյուսությանը հայտնի է իր տարբերակներով՝ իշխանավոր և ծաղրածու անվամբ: Հայկական տարբերակը սենի իր առանձնահատկությունները՝ կապված աղգային կյանքի յուրահատկությունների հետ: Եվ այսպես, Պրլ Պուլին ու Մելիքը

¹³ Ս. Իսրայելյան, Նշվ. աշխ., էջ 72, Մ. Գրիգորյան-Սոփանդարյան, Նշվ. աշխ., էջ 378: Ղարաբաղում ասացվածք է դարձել «շինել ես Պուլուն զգալնք արտահայտությունը»:

¹⁴ Մ. Բարխուդարյան, Նշվ. աշխ., էջ 66:

¹⁵ Մ. Գրիգորյան-Սոփանդարյան, Նշվ. աշխ., էջ 384:

¹⁶ ՀԱԻՔ, Ս. Իսրայելյանի ֆոնդ, FF 11, 9035—9041:

միշտ անբաժան են, միշտ իրար լրացնող և մշտական մրցման ու հակասութեան մեջ: Մեկիքն անընդհատ ձգտում է ինչ որ ձևով Պուլիտզեր խաբել, նրանից հնարամիտ, խելոք, սրամիտ երևալ և միշտ պարտվում է: Պարտվելու հանգամանքն ավելի սուր է բացահայտվում, քանի որ Մեկիքն օժտված է դիրքով, իրավունքով և հարստությամբ: Այսպես՝ Պուլիտզեր կազմում է հիմարների ցուցակը և առաջինը գրում Մեկիքի անունը: Պուլիտզեր կտրում է Մեկիքի ձիու պոչը, Մեկիքի կողմից Պուլիտզեր ձրթունքները կտրելուն ի պատասխան: Պուլիտզեր Մեկիքին տանում է աղբյուրը՝ ծարավ ետ բերում: Պուլիտզեր քննադատում է Մեկիքի վատ որդի լինելու հանգամանքը՝ կազմակերպելով անառակ որդու օրվան նվիրված տոն, ուր հրավիրվում են վարանդայի բոլոր հոգևորականները: Պուլիտզեր ստիպում է Մեկիքին տալ իրեն խոստացած 5 բեռ ցորենը և այլն, և այլն: Բոլոր անհեղինակ թվացող վիճակներից Պուլիտզեր հեշտությամբ հլթ է գտնում՝ մշտապես իր կողմը գրավելով ներկաների (ունկնդիրների) համակրանքը: Մեկիքը Պուլիտզեր առաջարկում է որոշել՝ ի՞նչն է քաղցրը՝ մե՞ղբը, թե՞ շաքարը, որի համար նրան մի թաս օղի է խոստանում: Պուլիտզեր անմիջապես լուծում է կնճռոտ հարցը, ասելով՝ ինչ գործ ունեմ երկու բարեկամների մեջ կռիվ գցեմ ու դատարկում է օղու թասը¹⁷:

Աշխարհի տարբեր ժողովուրդների բանահյուսական երգիծական կերպարները, ինչպես և մեր Պըլ Պուլիտզեր, հանդես են գալիս, ժամանակակից տերմինով ասած, արդարադատության ասպարեզում: Պուլիտզեր օգնում է արդար, ճիշտ դատավճիռ կայացնելուն: Բայց նրա համար այդ շատ ավելի դժվար է անել, քան այլ ժողովուրդների երգիծական կերպարներին, քանի որ նա ապրում է մի այնպիսի միջավայրում, ուր բացի սոցիալական, դասային անհավասարությունից, առկա են նաև ազգային-կրոնական խտրության գործոններ: Սակայն չկա մի զվարճապատում, ուր Պըլ Պուլիտզեր տեղի տա: Այսպես՝ Պուլիտզեր օգնությունն են դիմում գտնելու համար մսավաճառի կորած դրամները: Նա պահանջում է մի կաթսա եռացրած ջուր, որի մեջ լցնում է կասկածվողի մոտ հայտնաբերված դրամները. ճարպի կաթիլները բարձրանում են ջրի երեսը և կասկածը հաստատվում է¹⁸: Երկու կին դիմում են դատարան՝ որոշելու համար մի հավի պատկանելությունը: Պուլիտզեր իրեն դիմած դատավորին խորհուրդ է տալիս՝ հավը բաց թողնել փողոցում, ում տուն որ գնա, ուրեմն հավը նրանն է¹⁹: Նույն ձևով՝ հանդում բաց է թողնում անասուններին, դեպի ում տուն դնում են անասունները՝ նրան էլ պատկանում են²⁰ և այլն: Պուլիտզեր բավականին սրամիտ է լուծում մի կնոջ դատ, որը 6 տարի առաջ վաճառած 100 ձվերի համար պահանջում է մեծ գումար, պատճառաբանելով, թե 100 ձվերն արդեն մի քանի հարյուր հավ են դարձել: Նա պարզում է, որ ձվերը եփած են եղել և ինչ որ վճարվել է՝ լիովին բավական է²¹:

Պըլ Պուլիտզեր իբրև երգիծական կերպար բացահայտվում է նաև կրոնի ու աստծու մասին ունեցած իր դատողություններով: Նա բարեհոգորեն անտար-

17 Ս. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 19:

18 ՀԱԻՐԱ, Ս. Խանզադյանի ֆոնդ, FF II, 6321:

19 Մ. Բ ար խ ու դ ար յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 12, Ս. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 47:

20 Մ. Բ ար խ ու դ ար յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 18—19:

21 Մ. Բ ար խ ու դ ար յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 22, ՀԱԻՐԱ, Ս. Խանզադյանի ֆոնդ, FF II, 6265:

րևի է ղեկի ամեն կարգի աստվածաբանական վեճերը, հեշտությամբ, երկրային իրերի, երևույթների միջոցով ապացուցում է Գրիստոսի ու Մուհամմեդի համարիտ աստված լինելու շուրջը տարվող վեճերի դատարկությունը, և իր զվարճախոսություններում ծաղրում է աստծուն, Այսպես՝ Պուղին մի անգամ Դևի ժամանակ սաղի (մատովակ) է լինում։ Դիմելով ներկաներին, նա հարցնում է. «Կինին ինչպե՞ս բաժանի՝ աստծու պես, թե՛ մարդավարի (արդարությունամբ)՝ ներկաները պահանջում են բաժանել աստծու պես, և Պուղին սկսում է «Կինին լցնել» մեկին շատ, մյուսին քիչ, և Կինին քիչ, և Պուղին նրա օրինակին է հետևում։ Այդ դեպքում մարդու նման (արդարությունամբ) բաժանիր, պահանջում են քեֆ անողները և նա սկսում է հավասար բաժանել²², Կամ՝ զվարճախոսը հանդիպում է մի երիտասարդ, նոր ամուսնացած սարուշինցու, որը կնոջը միայնակ էր թողել գյուղում։ Նրա այն հարցին, թե կնոջը ո՞ւմ ևս պահ տվել, երիտասարդը պատասխանում է՝ աստծուն։ Այլի լավ է հարեանիդ պահ տայիր, նկատում է Պուղին²³։

Չավերտական և Պըլ Պուղու պատկերացումները հանդերձյալ աշխարհի մասին։ Մեկից խմիչք կորզելու նպատակով նա խոստանում է ասել, թե ո՞ւր է ղնում վերջինիս նոր մահացած հայրը՝ դրախտ, թե դժոխք։ Առաջին թասը խմելուց հետո ասում է, թե նրա հայրը ճանապարհվել է, երկրորդից հետո՝ ղնու գնում է և հասել է դրախտի ու դժոխքի միջև գտնվող թմբին, երրորդից հետո ասում է, թե մի թրմիտը լսելի, Մեկից հանգուցյալ հայրը ընկավ, բայց թե ո՞ւր՝ դժվարանում ևս ասել²⁴։

Պըլ Պուղին նույնպիսի թեթևություններ ու հաճախ սուր ծաղրի հասնող հեղինակներով է վերաբերվում ղեկի հոգևորականությունը։ Նրա աչքից չեն լրիվում հոգևորականների արատները, թերությունները։ Ավետարանը կարգավորող և տերտերին, որը պատճառարանում է, թե եկեղեցու լույսը թույլ է, Պուղին ասում է. միևնույն է դու կարդալ չես կարող, եթե անգամ Մեկի-Շահնազարի խոտի ղեղերն էլ վառեն ու լուսավորեն²⁵։ Նա ծաղրում է նաև անգրագետ տերտերին, որ պասի ժամանակ ծնված աղջկան Սարգիս անունով է մկրտել²⁶։ Զվարճախոսը իրեն կոնդակ շնորհած Ամարասի կաթողիկոսին առաջարկում է կատարել կոնդակի պայմանը, այսինքն՝ դրամ տալ։ Բարկացած կաթողիկոսի այն դիտողությունը, թե համ կոնդակ տա՛մ, համ էլ զրա՛մ, Պուղին պատասխանում է. եթե դու քո գրածին չհետևես, ուրիշները ինչպե՞ս կհետևեն²⁷։

Պըլ Պուղին, ինչպես և նրա համաշխարհային նմանակները կրում են որոշակի սոցիալական գաղափարներ։ Պուղու և Մեկից հակասություն լուծման դրսևորումներում, ուր Պուղին միշտ հաղթանակած է դուրս գալիս,

²² Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 28, Ս. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 42, ՀԱԻՔԱ, Ս. Խանդաղյանի ֆոնդ, FF II, 6307—6309.

²³ «Անեկդոտներ», ժողովեց Գ. Շերմադանյանցը, Թիֆլիս, 1878, էջ 36։

²⁴ Գ. Շերմադանյանց, նշվ. աշխ., էջ 186, Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 24—25, Ս. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 35—36։

²⁵ Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 41, Ս. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 39։

²⁶ Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 55։

²⁷ Նույն տեղում, էջ 64։

մարմնավորվում են առավելապես չքավոր գյուղացիության լայն խավերի ցանկություններն ու իդձերը: Պուդին ինքը մանրապատումներում ներկայանում է իբրև աղքատ գյուղացի: Հստ մի դվարճապատումի՝ նրա ողջ ունեցվածքը տեղավորվում է մի խուրջինի մեջ²⁸: Վերջերս գրի առնված մի մանրապատումում Պուդին իր տուն մտած գողերից թաքնվում է և նրանց այն հարցին, թե ինչու է թաքնվում, պատասխանում է. ամոթից, որ տանս ոչինչ չկա²⁹:

Սոցիալական երևույթները Պուդին ընկալում և գնահատում է ճիշտ ու որոշակի: Նա հստակ գնահատական է տալիս իր ժամանակի դատարանին, խղճին, արդարությանը, գտնելով, որ բոլորի շարժիչ լծակը փողն է: Միշտ և ամենուր Պուդին զրկված, շունևոր, աղքատ մարդկանց պաշտպանն է: Մի անգամ Պուդին ներկա է լինում հողաբաժանման, որին մասնակցում էին խանը, Մելիքը և գյուղացիները: Տեսնելով խանի և Մելիքի կողմից թույլ տրված անարդարությունը՝ գյուղացիներից հողի մեծ բաժին զավթելու նրանց ձգտումը, Պուդին վերցնում է հողաշափը և սկսում շափել բոլորի գլուխները: Այն հարցին, թե՞ ի՞նչ ես անում, պատասխանում է. ձեր խելքն եմ շափում: Դի՞թե չեք հասկանում, որ գյուղացուն պետք է հող տալ, որ ինքն էլ ապրի: ձեզ էլ պահի³⁰: Պուդին համարձակ ու անխնա է իշխանավորների թերությունները մերկացնելու մեջ: Մի գիշեր նա մնում է Աղդամում և նրա ձին գողանում են: Խանին գանգատվելիս, երբ վերջինս նկատում է, թե՞ պետք է գիշերը արթուն մնալիք և ձիուդ հսկելիք, Պուդին պատասխանում է. ես չգիտեի, որ խանը քնած է, թե չէ արթուն կմնայի³¹: Կամ՝ մի օր Պուդին ձուլիչը վերցնում է և գնում խանի պալատը: Մարդկանց այն հարցին, թե ձուլիչը ուր է տանում, պատասխանում է՝ խանի խելքը հնացել է, տանում եմ, որ նորից ձուլեմ³²:

Պըլ Պուդու շուրջը ստեղծված մանրապատումներում հաճախ զվարճախոսը հանդես է գալիս բարոյախոսի, խրատատուի դերում: Կյանքի ու կենցաղի բաղմամբիվ երևույթներն արժեքավորելիս նա միշտ ցուցաբերում է առողջ, կենսահաստատ մոտեցում, հանգում է այնպիսի եզրակացությունների, որոնք բխում են իրերի ներքին տրամաբանությունից, բայց ըմբռնելի ու հասու չեն մնացածներին: Պարսկաստանից եկած ձիավաճառին նա մի հարցով մերկացնում է և Մելիքին ետ պահում նրա քացի տվող ձին գնելուց³³: Կամ՝ զվարճախոսը հանդիմանում է մեկին, որն իրեն է հաղորդում մի ծանոթի՝ իր մասին հայտնած բացասական կարծիքը, ասելով՝ նրա խոսքը նման է օդում արձակած գնդակի, իսկ հաղորդողինը՝ սրտին արձակածի³⁴: Չափազանցությունների մեջ ընկնող մի մարդու ծաղրում է, թե ձեր ազգում յալանի (ծաղրածու) եղե՞լ է. սա ստեղծված կացությունը անհաղորդ ու անգետ, դրական պատասխան է տալիս: Մյուսին, որը մի իրողություն չի կարողանում

28 Գ. Շերմադանյան, նշվ. աշխ., էջ 189, Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 167—168:

29 Ս. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 79:

30 Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 11—12:

31 Նույն տեղում, էջ 19:

32 Նույն տեղում, էջ 16:

33 Գ. Շերմադանյան, նշվ. աշխ., էջ 16, Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 47—48:

34 Ս. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 20:

շնորհքով, կապակցված ներկայացնել, հարցնում է, ձեր ազգում փինաշի եղե՞լ է, սա նույնպես դրական պատասխան է տալիս³⁵:

Հայտնի է, որ երգիծական հերոսները մի կողմից հնարամիտ են, սրամիտ ու խելոք, մյուս կողմից՝ միամիտ, պարզամիտ, որը երբեմն հիմարության է հասնում: Պըլ Պուղին այս հատկանիշները կրում է նվազագույն չափով, և դրանք արտահայտված են հատկապես նոր գրառումներում, որոնցում Արևելքի հայտնի երգիծական կերպարներին փոխարինել է Պըլ Պուղին: Այսպես՝ Մուլլայի և նրա կնոջ գրազի զվարճապատումը, թե՛ ով առաջինը սկսի խոսել, նա էլ էշին շուր տա³⁶, Ս. Խանդադյանի գրառումներում վերագրվում է Պըլ Պուղուն³⁷: Նույնը և Մուլլայի կնոջ շատ ման գալու զվարճապատումը³⁸, Այստեղ Պուղին իր միամտությամբ ցուցաբերում է այնպիսի հաստատակամություն, որը նրան ծիծաղելի է դարձնում: Սակայն նոր գրառումների և հին հայտնի պատումների բաղդատությունը ցույց է տալիս, որ անցյալ դարի ստեղծագործություններում մեր զվարճախոսը այդ հատկանիշը կրել է մասնակիորեն: Ե՛վ հնի, և՛ նորի համար ընդհանուր են երկու սյուժե, որոնցում Պըլ Պուղին ցուցաբերում է միամտություն, պարզամտություն: Դրանցից մեկը հետևյալն է: Մի տարի Պըլ Պուղին հացահատիկ է ցանում: Կարկուտը վնասում է արտը և ընտանիքը զրկում ապրուստի միջոցներից: Հաջորդ տարին նա արմտիք է ցանում, և երբ կանաչած ցողունների վրա սկսում է նորից կարկուտ տեղալ, ծածկի տակից Պուղին ծիծաղում է տարերային աղետի վրա, ասելով՝ իմ ապրուստը հողի տակ է, թե կարող ես, իշիր, ատամներով հանի³⁹:

Պըլ Պուղու մասին եղած ստեղծագործությունների քննությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց զուգահեռներն ունեն Արևելքի շատ ժողովուրդների բանահյուսության մեջ: Այդ նմանատիպ սյուժեների ծագման, այս կամ այն ժողովրդին վերագրելու հարցը գրեթե անլուծելի է: Համապատասխան հասարակական, կենցաղային պայմանների դեպքում դրանք հեշտությամբ տեղափոխվում են մի ազգային միջավայրից մյուսը, ենթարկվում տրանսֆորմացիայի, ներծծվում տեղական գծերով ու կոլորիտով: Այսպես, օրինակ, վերը բերված Մելիքի ու Պըլ Պուղու գրազի զվարճապատման մեջ առկա են աշխարհագրական միջավայրի, կենցաղի, մարդկային փոխհարաբերությունների այնպիսի մանրամասներ, որոնք բնորոշ են Արցախին: Առաջին հայացքից այդ զվարճապատումը թվում է զուտ տեղական ստեղծագործություն, սակայն պարզվում է, որ հեռվում երևացող կրակից տաքանում է նաև գրազի պայմանով գիշերը դրսում մնացած արաբական բանահյուսության երգիծական կերպար Աբու Նուվասը⁴⁰: Նույնը վերաբերում է հիմարների ցուցակը կազմելուն: Այդպիսի մի ցուցակ կազմում է նաև Մուլլան, միայն այն տարբերությամբ, որ Պըլ Պուղին, երբ առաջինը գրում էր Մելիքի անունը, ուներ

³⁵ Նույն տեղում, էջ 28—29, Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 5—6:

³⁶ «Проделки хитрецов», составление, вступительная статья и общая редакция Г. Пермякова, М., 1977, стр. 374.

³⁷ ՀԱԻՐԱ, Ս. Խանդադյանի ֆոնդ, FF II, 6267.

³⁸ «Анекдоты Моллы Насреддина», составитель М. Тахмасиб, Баку, 1969, стр. 166. ՀԱԻՐԱ, Ս. Խանդադյանի ֆոնդ, FF II, 6269:

³⁹ Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 4, ՀԱԻՐԱ, Ս. Խանդադյանի ֆոնդ, FF II, 5321:

⁴⁰ «Проделки хитрецов», стр. 212—213.

ավելի առարկայական պատճառաբանություն. *Մենք անծանոթ, հեռավոր երկրից եկած վաճառականին դրամ է առաքել, որ նա մի լավ ձի գնի բերի: Մինչդեռ Մուլան, երբ ցուցակում առաջին և միակ անունը գրում է Թեմուրինը, տալիս է ավելի վերացական, ընդհանուր պատճառաբանություն, ուր շողափվում են Թեմուրի և պալաականների փոխհարաբերությունները⁴¹:*

Այս համեմատություններն ի հայտ են բերում որոշակի տիպարական ընդհանրություններ, որոնք գոյություն ունեն տարբեր ժողովուրդների վերաբերյալ զվարճապատումների մեջ: Վերը առանձնացվեցին իշխանավոր-զվարճախոս, զվարճախոս-դատավոր, զվարճախոս-կրոնավոր, զվարճախոս-խրատատու ընդհանրությունները: Այս ընդհանուր սխեմաների մեջ ամենից հեշտ փոխվում են անունները: Բիրրալ-Փադիշահ Ակրար, Մուլա-Թեմուր, Բահլու-Հարուն ալ-Ռաշիդ, Աբու-Նուվաս-Խալիֆ, Պըլ Պուդի-Մելիք դույզերի փոխհարաբերության սխեման բացահայտում է բավականին նման հատկանիշներ: Նույնը վերաբերում է մյուսներին:

Պըլ Պուդին իբրև երգիծական կերպար շատ ընդհանրություններ ունի նաև հայ ժողովրդական աեղական երգիծական հերոսների հետ և հաճախ փոխարինում է նրանց: Այսպես, տանձի և շլորի արդեն նշված զվարճապատումը սկզբնապես վերադրվել է Բադամ դադին⁴² և ապա՝ Պըլ Պուդուն⁴³: Բայց, ինչպես արդեն նշվեց, նա առանձնանում է աեղական կերպարներից: Այսպես, եթե Պուդ-Մուկուլը սրախոս ու բամբաստակ է, Պուդին՝ սրամիտ է ու ղուսպ, եթե Հորոսը դանդաղաշարժ է ու դանդաղամիտ, ապա Պուդին՝ վճռական է ու հնարամիտ, երբեմն նաև խորամանկ: Իր երգիծական հատկանիշներով Պուդուն ավելի մոտ է Կինոս քեռին: Ինչպես Պուդ Մուկուլի, այնպես էլ Հորոսի ու Կինոսի զվարճապատումները առօրյա, կենցաղային մակարդակից գրեթե չեն բարձրանում, մինչդեռ Պըլ Պուդուն մասին ստեղծագործությունները վեր են նեղ-տեղային շրջաններից և հանգում են հասարակական-տնտեսական կյանքին վերաբերող ընդհանրացումների:

Այսպիսով, Պըլ Պուդուն երգիծական կերպարը իր մեջ ներառել է մի կողմից որոշակի ազգային, պատմական, տնտեսահասարակական միջավայրին բնորոշ առանձնահատկություններ, մյուս կողմից՝ Արևելքի ժողովուրդների բանահյուսական երգիծական կերպարներին հատուկ տիպական դժբեր: Այդ առումով էլ նրա արժեքն ու նշանակությունը վեր է նեղ, պատմաազգագրական շրջանի սահմաններից: Պըլ Պուդին հավասարի իրավունքով կարող է կանգնել Աբու-Նուվասի, Բիրրալի, Բահլուի և Մուլա Նասրեդդինի հետ նույն շարքում:

ПЫЛ ПУГИ — БАЛАГУР ИЗ КАРАБАХА

АЛВАРД ГАЗИЯН

Резюме

Фольклор о Пыл Пуги (по жанровому признаку анекдоты) распространен в историко-этнографической области Арцах (ныне Нагорно-Карабахская автономная область) и Зангезуре.

⁴¹ «Анекдоты», стр. 31.

⁴² Գ. Շերմազանյանց, *նշվ. աշխ.*, էջ 69:

⁴³ Մ. Բարխուդարյանց, *նշվ. աշխ.*, էջ 66:

Печатные и рукописные источники позволяют раскрыть основные черты юмористического характера образа Пыл Пуги (неистовый, сумасшедший Погос). Образ Пыл Пуги впитал в себя некоторые особенности исторической эпохи и национально-этнографической среды. Наряду с этим анекдоты о Пыл Пуги имеют свои типологические параллели в фольклоре народов Востока (индийский, арабский). В отличие от других юмористических персонажей армянского фольклора в образе Пыл Пуги имеется ряд обобщений, касающихся различных сторон общественной жизни.